ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ԾԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ ԻՇԽԱՆԻ

186 հիմնական դպրոց

ԱՐԴԱՐԱՑԻ ԽԱՂԸ ԳԱՂԱՓԱՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Արտակ Ստեփանայն
մ. գ. թ. դոցենտ

Երևան- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. «ԱՐԴԱՐԱՑԻ ԽԱՂ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Արդարացի խաղը և դրա դրսևորման անհրաժեշտությունը սպորտում.....5

1.2. Կրթության ոլորտում բարոյահոգեբանական դաստիարակությունը՝ որպես անձի ձևավորման գործոն.....9

ԳԼՈՒԽ 2. «ԱՐԴԱՐԱՑԻ ԽԱՂԸ» ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1. Կրթական ոլորտում իրավական մշակույթ հայեցակարգը, տեսակները, գործառույթները և կառուցվածքը.....13

2.2. Դպրոցական տարիքի երեխաների իրավական մշակույթի դաստիարակության ձևերը, մեթոդները և սկզբունքները.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Թեմայի արդիականությունը:</u> Հասարակության մեջ լինելով՝ աշակերտները պետք է ծանոթ լինեն վարքագծի կանոններին, բարոյական արժեքներին, իրավունքներին և պարտականություններին, պետության օրենքներին և կանոնակարգերին: Դպրոցականները պետք է հոգեբանորեն և գործնականորեն պատրաստ լինեն հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին, բարոյական և իրավական նորմերի շրջանակներում սոցիալական պատասխանատվության և վարքագծի անկախության բարձրացմանը:

Իրավական մշակույթն ապահովում է անձի ազատության և անվտանգության ապահովումը, երաշխավորում է անձի իրավական պաշտպանությունը և ձևավորում քաղաքացիական գործունեություն, ստեղծում բարոյական մթնոլորտ, որտեղ բոլոր մարդիկ պաշտպանված են կամայականությունից և կարող են ազատորեն իրականացնել իրենց ստեղծագործական գործունեությունը: Վաղ դպրոցական տարիքից կարևոր է ուսուցանել և զարգացնել իրավագիտակցությունը, ինչպես նաև զարգացնել քաղաքացիական որակները և իրավական մշակույթը, քանի որ ապագայում դպրոցականները կբախվեն բազմաթիվ իրավիճակների, երբ անձնական գիտակցությունը կլինի քաղաքացիական դիրքի և բարոյական հասունության ցուցիչ:

Արդարացի խաղը սպորտային պատվի խորհրդանիշ է, յուրաքանչյուր անհատի ստեղծագործական մտքի և կարողությունների գնահատելու, արժանավայել ապրելու, արարելու և միաժամանակ մարդկանց արժանապատվություն ու բարեկամական ջերմ մթնոլորը մարդկանց և ազգերի մինջև պահպանելու գրավականը:

Մարզական ամենաբարձր նվաճումներն անգամ կարող են աննկատ մնալ, չընդունել ու չգնահատել ըստ աժանավույն, եթե դրանք ձեռք են բերվել բարոյական ցածր մակարդակի ու դաստիարակության տեր մարդկանց կողմից և անարդար ճանապարհով:

Նույնիսկ օլիմպիական ոսկին չի փայլի, եթե այն ձեռք է բերվել անարդար ճանապարհով: Ցավոք սպորտում հատկապես բարձր նվաճումների սպորտում, քիչ չեն օրինակներ, որոնք իրենց բացասական դրսևորումներով ստվեր են գցում սպորտի, նրա հեղինակության և ընդհանրապես օլիմպիզմի վեհ գաղափարների վրա: Շատ

մարզիկներ, նույնիսկ մրցավարներ ու մարզիկներ, հանուն անձնական շահի ու փառքի, հանուն քաղաքական ինտրիգների հաճախ խախտում են ազնիվ մրցակցության կանոնները, հակադրելով «արդարացի խաղի «ոգուն ու սկզբունքներին: Նման երևույթների կանխման միակ ուղին եղել ու մնում է մարզիկների բարոյահոգեբանական դաստիարակությունը:

Նշյալով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը:

<u>Հետազոտության նպատակը</u> և <u>խնդիրները:</u> Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել արդարացի խաղի գաղափարը դպրոցականների իրավական դաստիարակության գործընթացում: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները*՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Ներկայացնել արդարացի խաղը և դրա դրսևորման անհրաժեշտությունը սպորտում:
- Պարզաբանել դպրոցականի ուսուցման գործընթացում արդարացի խաղի դերը:
- Լուսաբանել դպրոցական տարիքի երեխաների իրավական մշակույթի դաստիարակության ձևերը, մեթոդները և սկզբունքները:

<u>Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:</u> Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, որոնք իրենց հերթին բաղկացած են ենթագլուծներից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. «ԱՐԴԱՐԱՑԻ ԽԱՂ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Արդարացի խաղը և դրա դրսևորման անհրաժեշտությունը սպորտում

Մարդկային արժապատվությունը, արդարաությունն ու ազնվությունը միշտ պետք է ուղեկից լինեն սպորտային ցանկացած մրցապայքարի: Արդարացի խաղը սպորտի հոգևոր հարցն է, նրա հիմնաքարը ու առանց դրա սպորտը զարգացում չի ունենա, ինչպես և չեն պահպանվի օլիմպիզմի ոգին ու գաղափարները: Ինչպես նոր օլիմպիական խաղերի հիմնադիր Պիեռ դե Կուբերտենն է ասել. -» Արդարացի խաղը և օլիմպիզմը անբաժանելի են»: Իսկ Արդարացի խաղի միջազգային կոմիտեյի նախագահ Վիլի Դոմի խոսքերով. «Եթե անարդարությունները և օրինախախտումները մեր ժամանակների բնորոշ հատկանիշներից են, ապա Արդարացի խաղը այն բանալին է, որով կարելի է հասնել դրանց վերացմանը»:

Ուրեմն, եթե Արդարացի խաղը չդառնա մարդկային անընդունելի երևույթների դեմ պայքարի կարգավորիչ և «դեղամիջոց» ապա սպորտի, հատկապես մեծ սպորտի ապագան վտանգված կլինի:

«Արդարացի խաղ» տերմինը ծեգել է անգլո-սաքսոնական երկրներում և առաջին հայացքից թվում է, թե կապ ունի միայն սպորտի հետ: Սակայն այն նշանակում է առաջին հերթին մաքուր, արդար խաղ: Իսկ միթե մարդկային կյանքն իրենից խաղ չի ներկայացնում:Կյանքն ինքն խաղ է, և այն պետք է լինի արդար, ազնիվ առանց նեգատիվ երևույթների[1]:

Անկախ ամեն ինչից «Արդարացի խաղը» սպորտում շատ առանձնահատուկ արժեք է ներկայացնում: Այն սպորտը դարձնում է բարոյական՝ հակադրելով անարդարություններին: Ճիշտ է ասված նպատակը չի կարող արդարացնել սխալ միջոցները: Վերջապես արդարության կանոնների խախտումը հակադրվում է նաև Աստծո պատվիրաններին ու ուսմունքին:

Արդարացի խաղի սկզբունքները բխում են օլիմպիզմի վեհ գաղափարախոսությունից և մարդկային պարզ հարաբերություններից: Այն ներառում է ոչ միայն կանոններ և գրված օրենքներ, այլև

[1] Սամվելյան Լ. Ա. , Սպորտը և արդարացի խաղը: Երևան, 2006, 96 էջ

- ճիշտ և պարզ բարոյահոգեբանական դրսևորումներ առանձին մարդկանց և ազգերի միջև,
- այն յուրօրինակ հարգանք է մեկ-մեկու նկատմամբ,
- առողջության բարելավման և վնասվածքներից զերծ պահելու կարողություն է,
- առանձնահատուկ վերաբերմունք է իր և մրցակցի նկատմամբ:

Արդարացի խաղը սկսվում է գրված և չգրված օրենքների ստույգ և անթերի կատարումով ու ենթադրում է.

- Ինքնահարգանք, ինչպես նաև հարգանք մրցակցի հանդեպ:
- Այն մրցակցին հավասարվելու անկեղծ ցանկություն է:
- Ազնվության դրսևորում է գիտակցականության մի այնպիսի մակարդակ, երբ մրցակիցը ավելի բարձր է դասվում ու ավելի մեծ արժեք ունի, քան ինքը խաղը կամ մրցույթը:
- Վերաբերմունքի յուրօրինակ ձև է, հավատարմության գրված և չգրված օրենքների ճիշտ կատարման հանդեպ:
- Վերջապես, «Արդարացի խաղը» նախ և առաջ յուրաքանչյուր մարդու անհատականության դրսևորումն է, նրա ողջ էությունը և կատարելիությանը:

Արդարացի խաղի սկզբունքները ամենամեծ արժեքներն են սպորտում, հատկապես այն մարզաձևերում, որտեղ կա երկկողմանի մրցակցություն[2]:

Մասնագետները նշում են, որ մենամարտային մարզաձևերով զբաղվողները համեմատաբար ավելի շատ են խախտում արդարացի խաղի կանոնները ու սկզբունքները: Եվ դրա հիմնական պատճառը անհատի հումանիստական աշխարհայացքի ձևավորման ժամանակահատվածում բռնցքամարտի կամ ըմբշամարտի խիստ պահանջներն են, որոնք բացասաբար են անրադառնում Մարզիկների վրա:

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեին (ՀԱՕԿ) կից գործող, «Արդարացի խաղ» հանձնախումբը առաջարկում է մի շարք միջոցառումների կազմակերպում պատանի մարզիկների հետ տարվող աշխատանքներում.

[2] Սամվելյան Լ. Ա. , «Արդարացի խաղ բոլորի համար», մենագրություն, 2007

1. Կազմակերպել և անցկացնել բազմաբովանդակ զրույցներ և վերլուծություններ սպորտի արժեքների, օլիմպիական շարժման, մարզիկների բարոյական դաստիարակության և այլ թեմաներով:
2. Անցկացնել զրույցներ օլիմպիական խաղերի «Արդարացի խաղի», սպորտի էթիկական կողմերի, մրցավարական կանոնների, աշխարհահռչակ մարզիկների բարոյակամային հատկությունների և նրանց մարդասիրական արարքների մասին:
3. Անհատական աշխատանք պատանի մարզիկների և նրանց մարզիչների շրջանում: Այստեղ լայնորեն օգտագործել «Արդարացի խաղի» Եվրոպական շարժման կողմից մշակված հատուկ հարցաթերթիկը, որտեղ հիմնականում ուշադրություն են դարձնում արդարացի խաղի հետևյալ սկզբունքներին.
   - հավասարության / հավասար հնարավորություններ/,
   - պատասխանատվության բարձրացում,
   - առողջության պահպանում,
   - մրցութային կանոնների պահպանում:

Պատասխաններն ու վերաբերմունքը գրանցվում է չորս տարբերակով՝ լիովին համաձայն եմ, մասնակի եմ համաձայն, համաձայն չեմ, չգիտեմ:

4. Մրցույթների և վիկտորինաների կազմակերպում:

Մարզումների ընթացքում կազմակերպվող վիկտորինաների ժամանական հենց իրենք մարզիկները հանդես են գալիս որպես մրցավարներ, գնահատում են իրենց ընկերների արարքներն ու գործողությունները, բացահայտում են թույլ տված կոպտություններն ու սխալները և միջոցներ են մշակում դրանք վերացնելու համար: Մարզիչը տալիս է հատուկ առաջադրանքներ և հանձնարարականներ մարզիկների ինքնազարգացման, ինքնագնահատման և ինքնադաստիրակության նպատակով: Տրվում է հատուկ գրականություն, կազմակերպվում են վիկտորինաներ, «Արդարացի խաղը» թեմաներով, մարզիկներին առաջարկվում է գրել համառոտ շարադրություն:

5. «Արդարացի խաղի» մրցույթի կազմակերպում երկու հիմնական անվանակարգերով՝

- մարդասիրության և կամային հատկանիշների դրսևորում մրցամարտի ժամանակ,
- գեղեցիկ մարտավարություն և վարվելաձև:

Հատուկ պատրաստված թերթիկները նախօրոք բաժանվում են մարզիչներին, մարզիկներին և նույնիսկ երկրպագուներին, որոնք էլ նշումներ են կատարում այս կամ այն մարզիկի բարոյական վարքագծի, մարտ վարելու և էթիկական նորմերի պահպանման, գեղեցիկ մարտավարության, մրցակցի վերաբերմունքի, մրցավարների որոշումներին նրանց վերաբերմունքի և, վերջապես նրանց արձագանքին ու զսպվածությունը հանդեպ հանդիսատեսն ու արտաքին այլ ազդակները:

6. «Արդարացի խաղը բոլորի համար» նշանաբանով տարբեր միջոցառումների և մրցույթների կազմակերպումը նույնպես կբարձրացնի ճանաչողության և բարոյահոգեբանական և բարոյական դաստիարակության մակարդակը: Չկա որևէ մարզաձև, որտեղ արդարացի խաղի սկզբունքները չհանդիսանան գաղափարական արժեքներ ու չկարևորվեն հասարակության կողմից:

Ներկայումս օլիմպիզմը, լինելով կյանքի փիլիսոփայություն, ուր սպորտը ու մշակույթը միաբանվում են արվեստի ու կրթության հետ պետք է միավորի հասարակական արժեքները և ոչ թե առանձնանա որպես երևույթ: Այդ համատեքստում հասարակական արժեքների պահպանման միակ ուղին եղել և մնում է օլիմպիզմի ոգին պահպանող արդար ու ազնիվ հարաբերությունները ազգերի և ժողովուրդների միջև:

Սպորտում «արդարացի խաղի» դրսևորումների անհրաժեշտությունը[3]

Այն երիտասարդները, երեխաները, որոնք զբաղվում են սպորտով, ֆիզիկական կուլտուրայով պետք է մեկ անգամ իրազեկ լինի «Արդարացի խաղի» կանոնների պահպանման հետևյալ ձևերին.

- բանավեճի մեջ չմտնել մրցակցի, մրցավարի և հանդիսատեսի հետ,
- հաշտվել և հավասարապես ընդունել թե հաղթանակը, թե պարտությունը,
- անկախ ստեղծված պայմաններից և իրադարձություններից, տիրապետել իրավիճակին և ցուցաբերել բարձր գիտակցություն,

[3] International fair play. Official page. Available at: http://www.fairplayinternational.org/what-is-fair-play (Accessed: 15 May 2021).

- հարկ եղած դեպքում ցուցաբերել կամք, զսպվածություն և հանդուրժողականություն,
- ընդունել և հարգել մարզչի, մրցավարի դիտողություններն ու հանձնարարականները,
- հիշել և պահպանել սպորտի բարոյական նորմերն ու արժեքները:

Քանի որ մեծ սպորտում կա մրցակցություն, հաղթանակի հասնելու ավելի անաչառ ձգտում և պայքար, ուստի և արդարացի խաղի կանոնները պահպանելը ավելի դժվար է ու երբեմն անհնար:

Մեծ սպորտի արդարացի ու ազնիվ Խաղի ոգու պահանջները դժբախտաբար խախտվում են ոչ միայն մասնակիցների, այլև բազմաթիվ մարզիչների, ծնողների, հովանավորների, առևտրային ընկերությունների, ակումբների, ֆեդերացիաների և նույնիսկ պետական այրերի կողմից: Վերջինիս դեպքում այն կրում է քաղաքական բնույթ և խիստ բացասաբար է անդրադառնում ժողովուրդների բարեկամության և համերաշխության վրա:

Անվիճելի է, որ եթե մարզիկը հույսը դնում է ինչ-որ միջոցների, հատկապես ղեկավարների միջամտության վրա, նրա ուժերը կրճատվում են կիսով չափ: Իսկ եթե նա նպատակ ունի հասնել առավելության արդար ճանապարհով հակառակը կրկնապատվում և ավելանում են կարողությունները:

Պաշտոնյաների կողմից ֆիզիկական, բարոյական և ֆինանսական չարաշահումները և ճնշումները օրենքի շատ լուրջ խախտումներ են և ուղղակիորեն ստվեր են գցում մրցակցության և մեծ սպորտի վրա: Այս դեպքում կարևոր է շրջապատի ազդեցությունը և անմիջական միջամտությունը:

1.2. Կրթության ոլորտում բարոյահոգեբանական դաստիարակությունը՝ որպես անձի ձևավորման կարևորագույն գործոն

Ներկա դարաշրջանի ժամանակակից պահանջներն իրենց հետքն են թողնում ապագա սերնդի ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի վրա: Գնալով, ինչպես բուհերում, այնպես էլ երկրի մասշտաբով կտրուկ պակասել է

ֆիզկուլտուրայով և սպորտով պարապողների թվաքանակը, որն իր բացասական ազդեցությունն է թողել նրանց բարոյականային որակների և առողջության վրա[4]:

Նշելով «Արդարացի խաղի» սկզբունքների ու կանոնների կարևորությունը, որպես մարդկային հոգևոր հարստություն՝ կրթության ոլորտի ռազմավարական ծրագրերում անհրաժեշտ է հատուկ տեղ հատկացնել նրանց տարածմանը և արմատավորմանը: Միայն այդ ձևով հնարավոր կդառնա բարելավել երկրի տնտեսությունը և հզորությունը, իսկ «Արդարացի խաղի» սկզբունքների և կանոնադրական պահանջների արմատավորումը պետք է լրացնի յուրաքանչյուր ուսումնական հաստատության ռազմավարական ծրագրերը:

21-րդ դարում ամբողջ աշխարհում տեղի ունեցող սոցիալտնտեսական և քաղաքական բուռն զարգացումները և լուրջ փոփոխությունները պարտադրում են մարդկանց մոտ ձևավորելու նոր մարդասիրական աշխարհայացք և գիտակցություն: Այս առումով պատահական չէ, որ միջազգային օլիմպիական կոմիտեն՝ ՄՕԿ-ը, 21-րդ դարը հռչակել է արդարացի խաղի դարաշրջան՝ կոչ անելով ողջ մարդկությանը բարության և համերաշխության:

Մինչդեռ աշխարհում և առանձին երկրներում տեղի ունեցող իրադարձությունները պարտադրում են վերանայել ու միջոցներ գտնել երկիրն էլ ավելի խաղաղ ու կառավարելի դարձնելու համար: Աշխատանքի նպատակն է, «Արդարացի խաղի» ոգուն և կանոններին համապատասխան, վեր հանել մարդկային արժեքների պահպանման կարևորությունը երիտասարդության, մասնավորապես ուսանողության շրջանում և ուղիներ մատնանշել բացասական երևույթներից ձերբազատվելու համար:

Շատ երկրներ, անհատներ և ղեկավարներ հանուն անձնական շահի, փառքի և հանուն քաղաքական ինտրիգների հաճախ խախտում են ազնիվ մրցակցության և մարդասիրության սկզբունքները՝ հակադրվելով ողջ աշխարհում ընդունված «Արդարացի խաղի» ոգուն և կանոններին:

Մտածելու տեղիք է տալիս հատկապես այն փաստը, որ շատ ղեկավարներ այսօր ավելի հակված են «Հաղթանակ ամեն գնով» կարգախոսին, քան բանակցային գործընթացին և արդար համագործակցությանը: Վտանգավոր է այն միտքը, որ

[4] Բաբայան Կ., Սոցիալական արատների կանխարգելումը սպորտում /մանկավարժահոգեբանական ասպեկտ / Երևան, 2003

«Արդարացի խաղի» կանոնները երբեմն խոչնդոտում են առանձին ղեկավարներին և պատճառ դառնում տվյալ երկրի, կամ գործընթացի առաջխաղացմանը: Հենց այստեղ էլ երկրները կորցնում են իրենց բարոյական նկարագիրը:

Հասարակական արժեքները, հավատը, հավասար իրավունքներն ու մարդկային համարժեք հարաբերություններն իրենց տեղը զիջում են էգոիստական, սեփականատիրական, վաշխառուական և այլ կոռուպցիոն երևույթներին: Կարծում ենք, որ նման երևույթների կանխարգելման միակ ուղին եղել ու մնում է.

1.մարդկանց, հատկապես երիտասարդ սերնդի բարոյահոգեբանական դաստիարակությունը և առանձին ղեկավարների նվիրվածությունը և հայրենանվեր աշխատանքը՝ երկիրը զարգացնելու և խաղաղությունը ապահովելու համար,

2.անձի բարոյական վարքագիծը և գիտակցությունը՝ հանուն ընդհանուր շահի և պետության հզորացման,

3.մարդկանց ցանկությունների և պարտականությունների իմացությունը և կողմնորոշումը,

4.մարդկանց պատասխանատվությունների կառուցվածքային աստիճանական բարեփոխումները՝ ի շահ մարդկային արժեքների պահպանման և ամրապնդման,

5.մարդասիրության գրված և չգրված օրենքների և սկզբունքների պահպանումը:

Ասվածից հետևում է, որ մարդասիրական իդեալների ու արժեքների մասին գիտելիքների ձեռբերումը և արմատավորումը պետք է 33 լինի յուրաքանչյուր մարդու սուրբ պարտականությունը՝ անկախ սեռից և կրոնական պատկանելիությունից: Յուրաքանչյուր մարդ՝ հատկապես երիտասարդ, պետք է սովորի ու պահպանի «Արդարացի խաղի» այնպիսի սկզբունքներ ու կանոններ ինչպիսիք են՝

1. Ինքնահարգանքը, ինչպես և հարգանքը դիմացինի նկատմամբ:
2. Արդարության, ազնվության ու բարեհոգության պահպանումը:
3. Օրենքների և որոշումների նկատմամբ հարգալից վերաբերմունքը:
4. Բարեկամի, նույնիսկ հակառակորդի նկատմամբ դժվարին պահերին բարոյաֆիզիկական օգնություն և աջակցություն ցուցաբերելը:
5. Յուրաքանչյուր հաղթանակ և պարտություն արժանապատիվ ընդունելը:

6. Ցանկացած պարզ և բարդ իրավիճակներում ինքնատիրապետումը, հիշելը, որ «Չկա ավելի մեծ հաղթանակ, քան հաղթանակը հենց քո նկատմամբ» (Պլատոն):

Յուրաքանչյուր երիտասարդ և պատանի պետք է հիշի և պահպանի մարդասիրական այնպիսի հասարակ, միաժամանակ կարևոր դրույթներ ինչպիսիք են՝

1. արդարությունը՝ յուրաքանչյուրի պարտքն է լինել արդար և ազնիվ,

2.նվիրվածությունը՝ դու նվիրված ես քո հայրենիքին, ազգին և ընտանիքին,

3.ընկերությունը՝ դու ընկեր ես բոլորին և համայն մարդկությանը, բարի ես ու բարյացկամ,

4. գթասրտությունը՝ դու բնության և կենդանիների պաշտպանն ես ու բարեկամը,

5. մաքրությունը՝ դու մաքուր ես մտքով, խոսքով, գործով, ողջ մարմնով ու հոգով,

6. աշխատասիրությունը՝ դու աշխատասեր ես և սկզբունքային:

Այս և ուրիշ շատ սկզբունքներ ու դրույթներ պետք է արմատավորվեն ու պահպանվեն մարդկանց մոտ դեռևս վաղ տարիքից՝ դպրոցում և երիտասարդության շրջանում, մասնավորապես ուսանողական մթնոլորտում: Ինչպես հայտնի է, ուսումնական հաստատություն են ընդունվում տարբեր սեռի, տարբեր բնավորությունների և հնարավորությունների, ֆիզիկական տարբեր պատրաստվածության և բազմաթիվ առողջական խնդիրներ ունեցող երիտասարդներ և աղջիկներ[5]:

Միակ առարկան, որը կարող է միացնել, համատեղելի դարձնել նրանց հարաբերությունները, մտերմությունն ու բարեկամությունը, ինչպես և զբաղվել նրանց առողջության բարելավման հարցերով, եղել և մնում են ֆիզիկական դաստիարակությունը և այն բազմաբնույթ սպորտային միջոցառումները, որոնք անց են կացվում կրթական ծրագրերի շրջանակներում և դրանից դուրս: Մյուս կողմից, ներկա դարաշրջանի ժամանակակից պահանջներն իրենց հետքն են թողնում ապագա սերնդի ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի վրա:

[5] Захаров М. А., «Педогогическая технология формирования поведения в духе «Fair Play» субъектов спортивных единоборств», Межд. форум «Молодёжь - наука – олимпизм», Москва, 2002г., 218 с.

ԳԼՈՒԽ 2. «ԱՐԴԱՐԱՑԻ ԽԱՂԸ» ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1. Կրթական ոլորտում իրավական մշակույթ հայեցակարգը, տեսակները, գործառույթները և կառուցվածքը

Իրավական մշակույթը հատուկ սոցիալական երևույթ է, որը որակապես բնութագրում է ինչպես անհատի, այնպես էլ ամբողջ հասարակության իրավական վիճակը: Իրավական մշակույթն արտահայտում է հասարակական կյանքի օբյեկտների միջև հարաբերությունների էթիկան: Սա յուրահատուկ ինտելեկտուալ ոլորտ է, որն ունի իր առանձնահատկությունները, որը իրավական գիտության ուսումնասիրության առարկա է:

Իրավական մշակույթը հասարակության իրավական համակարգի տարր է, որն անհրաժեշտ է պետության բնականոն գործունեության համար: Այն արտացոլում է ոչ միայն մարդու գործունեությունը իրավական ոլորտում, այլև դրանից դուրս, կապված է իրավական գիտելիքների կիրառման հետ: Իրավաբանական գիտելիքներն անհրաժեշտ են ոչ միայն իրավաբանական առարկաներ ուսումնասիրելու համար, դրանք անհրաժեշտ են գրեթե բոլոր ոլորտներում, որտեղ կիրառվում են իրավական նորմեր, գործում են օրենքներ:

Իրավական մշակույթը համարվում է հասարակության հատուկ իրավական ակտիվ, որը կարող է ընկալվել որպես հասարակության, անհատի կամ սոցիալական խմբի որակական իրավական վիճակ: Իրավական մշակույթը ձևավորվում է աստիճանաբար. Հասարակության քաղաքացիական իրավունքի մշակույթի անմիջական ազդեցության տակ ձևավորվում է անհատի քաղաքացիական իրավունքի մշակույթ: Այն ներառում է քաղաքացիական և իրավական մշակույթը, քաղաքացիական իրավունքի հարաբերությունների նորմերի մի շարք, հոգևոր և բարոյական արժեքներ, գիտելիքների համակարգ և դրանց ներդրում առօրյա կյանքում: Հետևաբար, որքան շուտ դպրոցականները սկսեն ուսումնասիրել իրավունքին առնչվող հարցեր, այնքան ավելի պատրաստված կանցնեն հասուն տարիքի:

Պատահական չէ, որ Հայաստանի Ազգային Օլիմպիական Կոմիտեյի գործկոմի նիստով քննարկվել է և հաստատվել մեր հանրապետության արդարացի խաղի ճանաչման և տարածման հատուկ ծրագիր, որի նպատակն է[6].

1. Ուժեղացնել սպորտի բարոյադաստիարակչական արժեքները:
2. Կրթության, գիտության, մամուլի և լրատվության տարբեր միջոցներով նպաստել անձի հոգևոր, բարոյական և ֆիզիկական կատարելիությունը՝ հանուն արդարության և խաղաղության պահպանմանը ողջ աշխարհում:
3. Մարդկային արժանապատվությունը, ազնվությունը, արդարությունը դարձնել յուրանչյուր անհատի ուղեկիցը սպորտում, կենցաղում:
4. Պահպանելով «արդարացի խաղի» կանոնները ու սկզբունքները, ֆիզկուլտուրան և սպորտը դարձնել բոլորի համար հաճելի զբաղմունք, ժամանց, լիարժեք հանգիստ և թարմության, առողջության և երկարակեցության, նաև նպատակ մեծ բարձրունքներ նվաճելու համար:
5. Ստեղծել մի այնպիսի միջավայր, որտեղ արդարացի խաղը արմատավորվի և տարածվի մարզական, ուսումնական բոլոր հաստատություններում, ակումբներում և այլուր:
6. Արդարացի խաղի կանոնների և սկզբունքների պահպանմամբ ու անշեղորեն կատարմամբ բարձրացնել և ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը և համերաշխությունը:
7. Աջակցել և օգնել մարզական այն կազմակերպություններին, ֆեդերացիաներին, որոնք ցանկություն ունեն և լրջորեն զբաղվում են մարզիկների շրջանում ազնվության և արդարության գաղափարների տարածման ու ամրապնդման հարցերով:
8. «Արդարացի խաղ» հանրապետական շարժումը միանում է աշխարհի առաջադեմ ուժերին, որոնք պայքարում են հանուն օլիմպիական շարժման միասնության, բացառում են օլիմպիական ոլորտում քաղաքական, ռասայական կրոնական և այլ խտրականությունները, պայքարում են հանուն արդար ու ազնիվ գաղափարների տարածմանը ողջ աշխարում: Հայաստանի

[6] Սամվելյան Լ. Ա. , Սպորտը և արդարացի խաղը: Երևան, 2006, 96 էջ

«Արադարացի խաղի» կոմիտեն, ինչպես և միջազգային ու եվրոպական «Արդարացի խաղ» շարժումը ոչ պետական հասարակական կազմակերպություն է, որը հետևելով օլիմպիզմի սկզբունքներին, զբաղվում է արդար , ազնիվ գաղափարների տարածմամբ սպորտում և այլուր:

2.2. Դպրոցական տարիքի երեխաների իրավական մշակույթի դաստիարակության ձևերը, մեթոդները և սկզբունքները

Դպրոցական երեխաները կարող են վատ որոշումներ կայացնել, որոնք ազդում են նրանց ապագայի վրա, ուստի կարևոր է զգուշացնել նրանց դավաճանության հետևանքների և արդար խաղի մասին: Այս դասը միտված է հայկական հասարակության մեջ դոպինգի նկատմամբ «զրոյական» հանդուրժողականություն ստեղծելուն: Խորհուրդ է տրվում դասընթաց անցկացնել առնվազն վեց ամիսը մեկ անգամ[7]:

Միջոցառումների նպատակային համակարգը, որը ձևավորում է քաղաքացիության վերաբերմունքը, օրենքի գերակայությանը համապատասխանելը, կոնֆլիկտային իրավիճակների, վեճերի և իրավախախտումների կանխարգելման ժամանակակից քաղաքակիրթ ուղիները, կոչվում է իրավական մշակույթի կրթություն:

Ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ պայման է սովորողների լավ կողմնորոշումը օրինականության, օրինական վարքագծի, իրավախախտումների իմացության և կատարված արարքների համար պատասխանատվության հարցերում: Կարևոր է, որ երեխաները իմանան բարության, պարկեշտության իրական հասկացությունները, ուշադրություն դարձնեն բարոյականության և արտաքին տեսքի հարցերին, պատվո կանոններին, անձնական իրավունքների և ազատությունների իմացությանը՝ համաձայն ՀՀ Սահմանադրության: Անհատի իրավական մշակույթը վերաբերում է հոգևոր կարգի երևույթին, որը հասարակության և պետության կողմից ուղղված է իրավագիտակցության բարձր

[7] Գրիգորյան Յու.Գ. Մինասյան Հ. Ս. , «ֆիզիկական կուլտուրա»առարկայի չափորոշիչ և ծրագիր. Երևան 2007, 139 էջ

մակարդակի դաստիարակմանը և զարգացմանը, իրավական վարքագծի և գործունեության արժեքային-նորմատիվային համալիրին:

Իրավաբանական կրթությունը նպատակաուղղված ազդեցություն է կրտսեր դպրոցականների գիտակցության վրա՝ իրավական մշակույթի բարձր մակարդակ կրթելու համար: Իրավաբանական կրթության հիմնական ձևերը ներառում են, առաջին հերթին, իրավաբանական կրթությունը, ինչպես նաև իրավաբանական կրթությունը և իրավական քարոզչությունը:

Հանրակրթական դպրոցում երեխաների և դեռահասների ֆիզիկական դաստիարակությունն առաջացրել և շարունակում է առաջացնել մեր հասարակության աճող մտահոգությունը: Հիմնական նպատակ է ճանաչվել երեխաների, դեռահասների և երիտասարդների ֆիզիկական դաստիարակության և վերականգնման խնդիրների համապարփակ լուծման անհրաժեշտությունը՝ ուղղված ֆիզիկական և հոգևոր բարելավմանը և երիտասարդ սերնդի մոտ ֆիզիկական դաստիարակության և սպորտի գիտակցված կարիքի ձևավորմանը:

Ի՞նչ եզրակացությունների պետք է գան աշակերտները դասից հետո.

- Դոպինգը խաբեություն է, իսկ խաբելը վատ է:
- Պետք է իմանաք և հետևեք կանոններին, որպեսզի խաղն արդար լինի (Ինչպես ցանկացած գործունեության, այնպես էլ սպորտում կան կանոններ, որոնք մարզիկը պետք է նախ իմանա և երկրորդը՝ հետևի: Դա արվում է, որպեսզի կարողանանք գնահատել բուն խաղը, նախապատրաստական մարզումը, մարզիկի կատարումը: Եթե ուսանողները կարծում են, որ կանոնները կարող են / պետք է խախտվեն, որ դրանում ոչ մի վատ բան չկա, ապա կարող եք նրանց նկարագրել. եթե կանոնները խախտելու մեջ վատ բան չկա, ապա միգուցե ավելի լավ է դրանք ընդհանրապես վերացնել, իսկ մարզիկները թող անեն այն, ինչ ուզում են՝ դոպինգ, փոխարինեն միմյանց, որպեսզի դառնան առաջինը և այլն: Այս իրավիճակի քննարկման նպատակն է աշակերտներին փոխանցել այն միտքը, որ կանոնները կարգի են բերում մրցույթը, քանի որ այս կերպ կան որոշ ընդհանուր պարամետրեր, որոնցով կարելի է գնահատել խաղը: Առանց կանոնների՝ անարխիա կլինի:)

- Դուք պետք է հարգեք ինքներդ ձեզ և ձեր հակառակորդներին (այս կետը կապված է նախորդ կետի հետ: Ձեր, ձեր թիմի և ձեր հակառակորդների նկատմամբ հարգանք ցուցաբերելու ամենաարդյունավետ և վստահ ձևը կանոններով խաղալն է: Միայն այս դեպքում խաղալու ունակությունը, թիմային աշխատանքը լիովին կդրսևորվի: Բացի այդ, հարգանք ցուցաբերելու մեկ այլ միջոց է մրցակցին մինչև մրցույթի մեկնարկը ձեռքսեղմումով բարևելն է, իսկ խաղից հետո, անկախ արդյունքից, նույն կերպ շնորհակալություն հայտնել նրանց խաղի համար:
- Պետք է հոգ տանել ձեր առողջության մասին (առողջության նկատմամբ հոգատարությունը սպորտի գլխավոր նպատակն է: Եթե մարզիկը առողջ է, նա կկարողանա ավելի լավ մարզվել և ավելի լավ արդյունքներ ցույց տալ մրցումներում: Կանոնավոր և չափավոր ֆիզիկական ակտիվությունը բարենպաստ է ազդում առողջության վրա: և երիտասարդացնում է մարմինը: Կանոնավոր վարժությունները օգնում են պայքարել հոգնածության դեմ և էներգիա հաղորդել: Կարևոր է պահպանել առօրյան՝ ուտել հավասարակշռված դիետա, քնել առնվազն 8 ժամ, միաժամանակ գնալ քնելու, կատարել վարժություններ և մարզվել: խրախուսվում է դասարանում խոսել դոպինգի հետևանքների մասին, կարող եք օգտագործել նկարազարդումներ Դոպինգ՝ մահվան բարձր ռիսկ, սրտի անբավարարություն, ինսուլտ, շաքարախտ, ավելորդ քրտնարտադրություն, կոպիտ մաշկ, գիշերային խռմփոց, քաղցկեղի ռիսկի բարձրացում և այլն):
- Խաղը պետք է զվարճալի լինի (Սպորտը զվարճալի է, և դա կարևոր է հիշել: Երբ դուք մարզվում եք, ձեր մարմինն արտազատում է էնդորֆիններ՝ հորմոններ, որոնք բարելավում են ձեր տրամադրությունը, նպաստում են արդյունավետ գործունեությանը և տալիս են ուրախության զգացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն ավարտական աշխատանքը, հետազոտության և վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները:

Եթե ուշադիր հետևենք սպորտի ծագման զարգացման և մասսայականացման առաջընթացին, ապա կտեսնենք, որ նրա հիմքում ընկած են օլիմպիական հիմնական գաղափարները, որոնք գոյություն են ունեցել տարբեր ժամանակաշրջաններում դրանք են «Արդարացի խաղ», «Արագ,Բարձր, ՈՒժեղ», « Կարևորը հաղթանակը չէ»: Սրանք հանդիսանում են ժողովուրդների բարեկամության և համերաշխության խորհրդանիշներ:

Մանկավարժության բնագավառում էթիկական դաստիարակության նոր ձևերի ու սկզբունքների հիմնավորումը այսօր քան երբևէ, դարձել է ժամանակի հրամայական պահանջ: Միայն այս ձևով հնարավոր կդառնա գնահատել ու ճանաչել իսկական արժեքները, ստեղծել նոր հասարակություն իր նոր մտածելակերպով ու սովորություններով: Սպասվում է, որ ապագայի երիտասարդությունը կլինի ավելի գիատկից, խաղասեր ստեղծագործ ու սիրով լեցուն իր և շրջապատի նկատմամբ: Այդ ամենին հասնելու ձևերից մեկն էլ սպորտի արժեքների ու նրա գաղափարնների ճիշտ դաստիարակությունն է ու կիրառումը կյանքում ու հասարակության մեջ, ու այդ ամենի հիմքում ընկած է էթիկական կրթությունը և բարոյագիտական դաստիարակությունը: Ներկայումս մարդկությունը ականատես է տեխնոլոգիանների հզոր առաջընթացի, մյուս կողմից անարդարությանը, բարոյական նորմերի ոչնչացմանը, պատերազմին, ռասիզմին, աղքատությանը, թշվառությանը և մարդկության ապագան, առավելապես պայմանավորված է նրա մարդասիրական գաղափանների իրականացումից:

1. Գործնական և տեսական սեմինարների և խորհրդակցությունների կազմակերպում ոչ միայն մարզիկ-մասնակիցների, այլև մարզիչ-մանկավարժների, ղեկավարների և ներկայացուցիչների համար:
2. Ազգային ֆեդերացիաները, ֆիզկուլտուրային և սպորտի բնագավառի բոլոր կազմակերպությունները ու մարցավարական հանձնաժողովները մրցումների կանոնները և կանոնադրությունները կազմելիս պետք է առաջնորդվեն հավասարության սկզբունքով՝ պահպանելով «Արդարացի խաղի», արդար մրցակցության պայմանները:
3. Անկախ մրցումների մաշտաբից ու բնույթից սահմանել Հատուկ մրցանակ «Արդարացի խաղը» նշանաբանով: Հատուկ ուշադրություն դարձնել մրցումների գրավչությանը, դրանց հուզականությանը և այլ հոգեբանական կողմերին ու բարոյական դրսևորումներին:
4. Ազգային ֆեդերացիաները և կազմակերպությունները պետք է մշակեն ու կիրառեն նաև հատուկ ծրագրեր, ինչու չէ նաև հատուկ թեստեր պարզելու համար առանձին մարզիկների վերաբերմունքը արդար խաղի կանոնների խախտման դրդապատճառների դրսևորումների նկատմամբ:
5. «Արդարացի խաղի» գաղափարների և տեսական գիտելիքների հաղորդման ու տարածման նպատակով հաճախակի կազմակերպել և անցկացնել դասախոսություններ, գործնական պարապմունքներ, հրատարակել ուսումնական ու մեթոդական ձեռնարկներ ուղեցույցներ, նյութեր ու հոդվածներ նվիրված արդարացի դրսևորումների ու սկզբունքներին:
6. Սահմանել արդարացի խաղի պարգևներ, որոնք կարող են լինել ֆեդերացիանների, ազգային օլիմպիական կոմիտեյի, նախարարությունների կողմից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաբայան Կ., Սոցիալական արատների կանխարգելումը սպորտում /մանկավարժահոգեբանական ասպեկտ / Երևան, 2003
2. Գրիգորյան Յու.Գ. Մինասյան Հ. Ս. , «ֆիզիկական կուլտուրա»առարկայի չափորոշիչ և ծրագիր. Երևան 2007, 139 էջ
3. Սամվելյան Լ. Ա. , «Արդարացի խաղ բոլորի համար», մենագրություն, 2007
4. Սամվելյան Լ. Ա. , Սպորտը և արդարացի խաղը: Երևան, 2006, 96 էջ
5. Захаров М. А., «Педогогическая технология формирования поведения в духе «Fair Play» субъектов спортивных единоборств», Межд. форум «Молодёжь - наука – олимпизм», Москва, 2002г., 218 с.
6. International fair play. Official page. Available at: http://www.fairplayinternational.org/what-is-fair-play (Accessed: 15 May 2021).